# ՀՄԱՅԱԿ ՎԱՀԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

----- 2021 թվականի N –Ա

**ՀՄԱՅԱԿ ՎԱՀԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Հմայակ Վահանի Մանուկյանին (ծնվ.՝ 1995 թվականի հունվարի 12-ին, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Գյուլբենկյան 1., բն. 27):

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**ՀՄԱՅԱԿ ՎԱՀԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Հմայակ վահանի Մանուկյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի

ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրա գիտական գործունեության ընթացքում ձեռք բերված գիտելիքների ընդլայնմանը և նոր գիտելիքների ստացմանն ու կիրառմանն ուղղված մտավոր ստեղծագործական գործունեությունը շարունակելու հնարավորության ընձեռնմամբ:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

ՀՀ քաղաքացի Հմայակ Վահանի Մանուկյանը (ծնվ.՝ 1995 թվականի հունվարի 12-ին, հաշվառման հասցեն՝ ք.Երևան, Գյուլբենկյան 1, բն. 27), ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 796-Ա որոշմամբ ստանալով տարկետում՝ իրականացրել է գիտահետազոտական գործունեություն հոգեբանության ոլորտում:

2021 թվականի դեկտեմբերի 28-ին պաշտպանել է ատենախոսությունը, և ՀՀ ԲՈԿ-ի 064 մասնագիտական խորհրդի որոշմամբ նրան շնորհվել է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում թեմայով:

Աշխատում է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հոգեբանության» ամբիոնում որպես դասախոս՝ դասավանդելով «Հոգեբանություն» առարկան, զբաղվում է գիտատեխնիկական և գիտամանկավարժական գործունեությամբ:

Ունի բազմաթիվ տպագրված հոդվածներ հայկական, արտասահմանյան ամսագրերում:

**Ակնկալվող արդյունքը.**

«Հմայակ Վահանի Մանուկյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը, Հ. Մանուկյանին՝ որպես լավագույն մասնագետի, հնարավորություն կընձեռի գիտական, գիտատեխնիկական, գիտաուսումնական և գիտահետազոտական գործունեությունը ծավալելու նպատակով, աշխատելու Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Միաժամանակ «Հմայակ Վահանի Մանուկյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

3. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: